ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Սմբատի Քոսյանի՝ «Արևմտահայ գաղթականությունն Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում 19-րդ դարի 90-ական թթ.» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հայ գաղթականությունը լինելով հայոց պատմության ողբերգական ժամանակաշրջանների անմիջական արգասիքը, իրենից ներկայացրել է հայ ազգաբնակչության բռնի տեղաշարժը մայր հայրենիքում, կամ մի երկրից մյուսը: Պարբերաբար կատարվող զանգվածային տեղահանությունները, արտագաղթերը և գաղթաշխարհի առաջացումը պայմանավորված են եղել Հայաստանի սոցիալ-քաղաքական անբարենպաստ հանգամանքներով, երբ Հայաստանի տարածքը տարբեր ժամանակահատվածներում ենթարկվել է նվաճողների ասպատակությունների, հրի ու սրի, զանգվածային կոտորածների և մեծ ավերածությունների:

Մշտական կամ ժամանակավոր բնակության նպատակով՝ քաղաքական, տնտեսական կամ այլ շարժառիթներով Հայաստանից հարկադրաբար, կամ հոժարակամ հեռանալը մեծագույն չարիք էր հանդիսանում երկրի համար: Շարունակաբար կրկնվող արտագաղթերի հետևանքով հայ բնակչությունից զրկվեցին Հայաստանի շատ գավառներ, որով բնակչությունն ավելի նոսրացավ և զրկվեց պաշտպանունակությունից և իր անկախության համար պայքարելու հնարավորությունից: Միևնույն ժամանակ ողբերգական խիստ փոփոխության ենթարկվեց Հայաստանի ժողովրդագրական կազմը՝ հօգուտ եկվոր մահմեդականների:

XIX դ. 90-ական թվականների հայ գաղթականության խնդիրների լուսաբանմանն է նվիրված Լիլիթ Քոսյանի թեկնածուական ատենախոսությունը, որի հեղինակն ուշագրավ աշխատանք է կատարել թեմային առնչվող պատմագիտական նյութեր հավաքագրելու, դրանք ի մի բերելու, շարադրելու և համապատասխան եզրակացություններ կատարելու ուղղությամբ:

Сканировано с CamScanner

Աբդուլհամիդյան զանգվածային կոտորածների հետևանքով առաջացած 100 հազար հայ գաղթականության պատմության լուսաբանումն իրոք ունի գիտաքաղաքական կարևորություն, քանի որ այն մի կողմից պայմանավորում է գաղթի քաղաքական ակունքները ճիշտ ընկալելու, դրա նպատակները հասկանալու անհրաժեշտությամբ, իսկ մյուս կողմից ամբողջական է դարձնում Օսմանյան կայսրությունում տարբեր պատմափուլերում արևմտահայության նկատմամբ իրականացված կոտորածների և ցեղասպանության խճանկարն ամբողջացնելու ուղղությամբ: Թեմայի հարցերի բազմազանությունն անհրաժեշտորեն խնդիր է առաջադրում բազմակողմանի պրպտումների շնորհիվ հետազոտել հայ գաղթականության այդ ժամանակաշրջանի պատմությունը և հնարավորության սահմաններում ընդհանուր գծերով վերականգնել ճիշտ և դժվարին պատկերը: Գործ ունենք մի տենախոսության հետ, որի գիտական նշանակության և քաղաքական արդիականության բաղադրիչները մեկտեղված են և անմիջական է կապը մեր օրերի հետ, իսկ հիմնախնդրի գիտատեսական և գործնական պատմաքննության արդիականությունը լիովին կարևորվում է քաղաքական ներկա զարգացումների, անցյալի պատմական դասերի արժևորման և հետազոտության գիտական առաջնահերթության լույսի ներքո:

Չի կարելի անտեսել այն իրողությունը, որ մինչև ատենախոսի հիշյալ ուսումնասիրությունը հայրենական պատմագրության մեջ ոչինչ չի արվել այդ խնդրի լուսաբանման ուղղությամբ: Սակայն անաչառ լինելու համար նշենք, որ պատմաբաններից շատերը հարցը լուսաբանել են ելնելով իրենց կողմնակի հետաքրքրություններից: Լ. Քոսյանն առաջին անգամ փորձել է մեկ ամբողջի մեջ հավաքել, կտոր-կտոր վերականգնել և գիտական հանրության դատին ներկայացնել XIX դ. 90-ական թվականների արևմտահայ գաղթականության պատմությանը վերաբերող ոչ այնքան փաստառատ տեղեկությունները, որն, անշուշտ, արժանի է միայն դրվատանքի:

Ատենախոսությունն ունի ընդունելի կառուցվածք և ծառայում է թեմայի պարզաբանմանը: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, վերջաբանից և օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից (124 համակարգչային էջ):

Մենք ամենևին էլ մտադիր չենք մեկ առ մեկ վերլուծելու ինչպես նրա աշխատանքի երեք գլուխների, այնպես էլ ներածության ու վերջաբանի մանրամասն

Сканировано с CamScanner

բովանդակությունը: Սակայն, միայն ընդհանուր գծերով նշենք, որ ներածության մեջ հիմնավորված է մագիստրոսական թեզի արդիականությունը, աշխատանքի նպատակը, խնդիրները, ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը, ժամանակագրական շրջանակները և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը:

Առաջին գլխում, որը վերնագրված է՝ «***1890-ական թթ. արևմտահայերի զանգվածային կոտորածների հետևանքները և գաղթականության տեղաշարժերը***» հեղինակը համապատասխան պատմագիտական նյութի օգտագործմամբ փորձել է վեր հանել XIX դ. 90-ական թվականներին օսմանյան կառավարության վարած ցեղասպանության քաղաքականության սոցիալական, քաղաքական և ժողովրդագրական հետևանքները և արևմտհայ գաղթականության շարժընթացը:

Երկրորդ գլխում, որն ունի՝ «***Ռուսական պետական, հասարակական և կրոնական կազմակերպությունների աջակցությունը արևմտահայ գաղթականությանը***» խորագիրը ատենախոսը ներկայացրել է ցարական կառավարության և Կովկասի կառավարչապետության ցուցաբերած աջակցությունը Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում ապաստանած գաղթականությանը, լուսաբանել է արևմտահայ գաղթականության հարցերով զբաղվող կոմիտեների և բարեգործական ընկերությունների՝ մասնավորապես ԿՀԲԸ արդյունավետ գործունեությունը և կարողացել է արժևորել է Հայ առաքելական եկեղեցու մարդասիրական աջակցությունը՝ ցույց տալով ընդհանրապես հայ հասարակության հոգատար վերաբերմունքը գաղթականության բազում խնդիրներին:

Երրորդ՝ «***Արևմտահայության օգնության կազմակերպումը եվրոպական և ամերիկյան կազմակերպությունների կողմից***» գլխում Լ. Քոսյանը բացահայտել է եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում մասնավոր և պետական կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անհատների կողմից մեծ թափ ստացած հայանպաստ շարժման և ջարդերից փրկված հայերի օգնության մանրամասները:

Ատենախոսությունը շարադրված է պատմագիտական աշխատությունների ուսումնասիրման պատշաճ մակարդակով, գիտականության տեսանկյունից,

Сканировано с CamScanner

առաջադրված խնդիրներին համապատասխան: Հեղինակը կարողացել է նպատակային և տեղին օգտագործել թեմային վերաբերող պատմագիտական տեղեկատվությունը և հետազոտության ենթարկել առաջադրված հիմնահարցը: Ատենախոսության պատրաստման համար հեղինակը հայտնաբերել, ուսումնասիրել և գիտական շրջանառության մեջ է դրել ՀԱԱ-ի, Եղ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Մ. Մաշտոցի անվան մատենադարանի, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի, ԳԱՐՓ-ի արխիվային վավերագրեր, հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով հրատարակված տպագիր սկզբնաղբյուրներ, մենագրություններ, գիտական հոդվածներ, ժողովածուներ, ատենախոսություններ, պարբերական մամուլի նյութեր և էլեկտրոնային կայքէջեր (շուրջ 120 անուն):

Հետազոտության բազմակողմանի վերլուծությունը, պատմական փաստերի քննությունը և համատեքստային գնահատումն ապահովելու համար ատենախոսը կիրառել է պատմավերլուծական, աղբյուրագիտական, համեմատական, համադրական մեթոդներ՝ ստույգ դեպքերի համադրման և զուգահեռներ անցկացնելու միտվածությամբ: Ուստի և ուսումնասիրվող նյութից բխող եզրակացությունները և արդյունքները, որոնց հասել է գրախոսվող աշխատանքի հեղինակը, լիովին համոզիչ են, իրար չեն հակասում, համապատասխանում են հետազոտության հարցադրումներին և արտացոլում են հետազոտության բովանդակային բաղադրիչը:

Արժևորելով ատենախոսի կատարած աշխատանքը միաժամանակ հարկ ենք համարում արտահայտել նաև մեր ցանկությունները և դիտողությունները ուղղված ատենախոսին:

1. Աշխատանքում առկա է որոշակի խզում և անհամաձայնություն ատենախոսության վերնագրի և գլուխ III-ի բովանդակության միջև: Ատենախոսությունը վերնագրված է՝ «*Արևմտահայ գաղթականությունն Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում 19-րդ դարի 90-ական թթ.*», սակայն ատենախոսը III գլխում ներկայացնում է եվրոպական և ամերիկյան հայանպաստ կազմակերպությունների ցուցաբերած օգնության գործի կազմակերպումը հենց բուն Արևմտյան Հայաստանի տարածքում և

Сканировано с CamScanner

Պարսկաստանի հայաբնակ վայրերում ապաստանած գաղթականներին: Ըստ էության III գլխի փաստական նյութն արտացոլված չէ ատենախոսության վերնագրում:

2. Խոսելով գաղթականների թվաքանակի մասին, հեղինակն առանձին-առանձին ներկայացնում է Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Իրանում, Եվրոպական երկրներում հանգրվանած հայ գաղթականների մոտավոր վիճակագրությունը, սակայն ընդհանուր պատկերացում կազմելու համար այդպես էլ չի ընդհանրացվում հայ գաղթականության ընդհանուր թվաքանակը 1890-ական թվականներին, որի պարզաբանումն, անշուշտ, ունի խիստ հրամայական անհրաժեշտություն:
3. Ռուսական պետական և հասարակական կազմակերպությունների կողմից գաղթականության օգնության կազմակերպման գործն ամբողջական ներկայացնելու և ընթերցողին այն ընկալելի դարձնելու համար վատ չէր լինի, եթե հեղինակը, թեկուզև առանձին ենթագլխով, ներկայացներ նաև գաղթականների տեղաբաշխումն Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում՝ ըստ վարչական բաժանումների՝ Երևանի, Թիֆլիսի, Բաքվի նահանգների և գավառների:
4. Կարծում ենք, որ հեղինակի ուշադրությունից ինչ-ինչ պատճառներով վրիպել են փաստագրական որոշ տեղեկություններ: Այսպես, էջ 86-89-ում հեղինակը խոսում է Հյուսիսայի Եվրոպայում և Մեծ Բրիտանիայում ջարդերից փրկված հայությանը օգնության գործի կազմակերպման մասին, սակայն ոչ մի խոսք չկա իռլանդացի նշանավոր ճանապարհորդ, հայագետ և հասարակական գործիչ Հենրի Լինչի հայասիրական-մարդասիրական գործունեության վերաբերյալ:
5. Ատենախոսությունը գիտականության տեսանկյունից էլ ավելի կշահեր, եթե հեղինակի ուշադրությունից չվրիպեին նաև թեմայի ամբողջականությունն ապահովող մի շարք այլ աշխատություններ ևս, որոնք հետագայում կարելի է ընդգրկել մենագրության հարատարակության ժամանակ:

Ենովք Տէր-Արիստակէսեան, *Գաղթականի մը համառօտ կարծիքները, Մոսկուա, 1900:*

Сканировано с CamScanner

Գուրգեն Եազըճեան, *Ապտիլ Համիտ Բ. կարմի սուլթանը, Պէյրութ, 1980:*
Ստեփան և Կարո Պողոսյաններ, *Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ.Ա, Երևան, 2000:*
Նիկոլայ Հովհաննիսյան, *Սուլթան Աբդուլ Համիդ II-ի հակահայկական քաղաքականությունը արաբական ժամանակակից պատմագրության մեջ, «ՊԲՀ», 1987, թիվ 1, էջ 75-88:*
Ջ. Հովհաննիսյան, Մ. Ավետիսյան, *Փաստաթղթեր Արևմտյան Հայաստանում 1894-1896թթ. ցեղասպանության վերաբերյալ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1994, թիվ 1, էջ 151-163,*
Ս. Պողոսյան, *Թուրքերը թուրքերի մասին, Երևան, 2000,*
Համո Վարդանյան, *Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները XIX-րդ դարի վերջին քառորդում, Երևան, 1969,*
Е. Саркисян, *Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Ер., 1972.*
Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Թուրքական աղբյուրներ, Դ, թարգմանություն բնագրից՝ Ա. Սաֆրաստյանի, Գ. Սանթուրջյանի, Օսման Նուրիի՝ «Աբդուլ Համիդ II-ը և նրա իշխանության շրջանը», Երևան, 1972:
A cura di **Georges-Henri Ruyssen SJ,** *La questione Armenia, vol. II, 1896-1908. Documenti dell' Archivio della longregazione per le Chiese Orientali, (ACO), Roma, 2014.*
The Armenian Genocide: prelude and aftermath, as reported in the U.S. press, "Wasington Post", volume 1, (1890-1915), compiled and edited by Rev. Vahan Ohanian, Ara Ketabian, Mekhitarist publication, 2021.

6. Կատարված աշխատանքում տեղ են գտել լեզվաոճական, խմբագրական և տեխնիկական որոշակի սպրդումներ:

Չենք կարծում, որ հիշյալ թերությունները նսեմացնում են ատենախոսության արժեքը, քանի որ այն առկա թերություններով հանդերձ համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, ունի գիտագործնական և ճանաչողական որոշակի արժեք և հարստացնում է հիմնահարցի պատմագրությունը: Ուստի հաշվի առնելով կատարված աշխատանքը միջնորդում ենք պատմական գիտությունների գիտական աստիճաններ շնորհող «Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտական խորհրդին՝ Լիլիթ Սմբատի

Сканировано с CamScanner

Քոսյանին շնորհել իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երևանի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց

պատմության ամբիոնի պրոֆ.,

պատմական գիտությունների թեկնածու

Մասնագետի (Ավետիս Հմայակի Հարությունյան) ստորագրության իսկությունը հաստատում եմ՝

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական քարտուղար

մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ **Հ. Վ. Թադևոսյան**

06.02.2026թ.

Сканировано с CamScanner